

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՎԱԼԵՐԻ ԺԻՍԿԱՐ ԴԷՍՏԵՆԻՆ

Հունիսի 7-ին, հինգշաբթի օրը, ժամը 17-ին, Հայոց Հայրապետը Փարիզի Էլիզեի պալատում պաշտոնական այցելություն տվեց Ֆրանսիայի հանրապետության վսեմաշուք նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենին:

Հայոց Հայրապետի և հանրապետության մեծահարգ պարոն նախագահի միջև ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ 50 րոպե տևող զրույց, որի ընթացքում պարոն նախագահը հետաքրքրվեց Ֆրանսիայի հյուրընկալ հողի վրա ապրող հայ ժողովրդի եկեղեցական, կրթական, մշակութային կյանքով, ինչպես նաև թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում հայ եկեղեցու արդի վիճակով: Հայոց Հայրապետը հանգամանորեն պատասխանեց պարոն նախագահին հետաքրքրող բոլոր հարցերին՝ որոնց նկատմամբ պարոն նախագահը հանդես բերեց մեծ ուշադրություն:

ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 20.30-ին, Փարիզի «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցի շքեղ դահլիճում տեղի ունեցավ համաժողովրդական ողջերթի մեծ ընդունելություն՝ մասնակցությամբ ավելի քան 400 հրավիրյալների:

Ողջերթի սույն սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Առաջին բաժակը առաջարկեց խմել տ. Սերովբե արքեպիսկոպոսը՝ բարի ճանապարհ մաղթելով Վեհափառ Հայրապետին:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը ընդհանուր ոգևորության և խանդավառության մեջ աշխարհահռչակ նկարիչ Գառնիկ Զուլումյանի (Գառզու) կուրծքը զարդարեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի ադամանդակուռ շքանշանով՝ բարձր գնահատելով մեծ արվեստագետի տաղանդն ու վաստակը ի նպաստ համաշխարհային մշակույթի:

Զափազանց հուզիչ և սրտագրավ էր այս առթիվ մեծատաղանդ արվեստագետի երախտագիտական և շնորհակալական խոսքը՝ ուղղված Հայոց Հայրապետին այս բացառիկ պատվի համար, խոսք, որի մեջ նա հպարտությամբ հաստատեց հայ տաղանդավոր ժողովրդի համեստ զավակը լինելը:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունեց նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառան-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՖՐԱՆՍԻԱ ԱՑՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՂԱԾ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏ.ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՄԱՏԵՆԱՇԱՐԱՆԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ. ՍՍՌ

VALENCE

DANS LES PAS DE VASKEN 1er

A LA MAIRIE DE VALENCE

● A la préfecture de la Drôme

lyon-région

Le Journal

Une semaine de visite en Rhône-Alpes pour le « pape » des Arméniens

● Bénédiction à la salle des fêtes de Valence

Le catholicos des Arméniens à Lyon : hommage à Edouard Herriot

informations départementales

Paris-Presse Matin

SA SAINTETE VASKEN Ier, PAPE DES ARMENIENS A TERMINE SA VISITE EN FRANCE A ARNOUVILLE

du rhône

Sa Sainteté Vasken 1er reçu à la préfectu

lyon-communauté urbaine

Journal

avec le catholicos des Arméniens

Une cérémonie religieuse de trois heures et une homélie.. politique

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՖՐԱՆՍԻԱ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՂԱԾ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

գավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Ա-ճեմյանը հետևյալ ճառով.

«Վեհափառ Տեր,

Գերապայծառ և հոգեշնորհ հայրեր և պատվարժան ներկայացուցիչներ Փարիզի և ֆրանսահայության,

Քաղցր պարտականություն է ինձի համար Նորին Ամենապատվություն Երուսաղեմի Պատրիարքին, որբոց Հակոբյանց միաբանության և Երուսաղեմի մեր ժողովուրդին հարգանքն ու սերը բերել Ձերդ Սուրբ Օծության: Եվ անգամ մը ևս, ուր որ ալ գտնվի Ձերդ Վեհափառությունը, պիտի ըլլանք Ձեր կողքին, իբրև հնադարյան սուրբ Աթոռը Երուսաղեմի:

Այս առիթով շատ կդժվարանամ խոսիլ, որովհետև շատ բան ունիմ խոսելիք, բայց քիչը միայն կուզեմ ըսել: Ասկե քանի մը շաբաթներ առաջ, երբ Եգիպտոսի նախագահը Հրեաստան այցելեց, երեք քրիստոնյա համայնքներու կողմե երեք եկեղեցականներ գացած էինք ընդունելության: Մոտս նստած էր Տրուզներու կրոնական պետը: Դարձավ ինձի և հարցուց. «Ինչո՞ւ համար երեք եպիսկոպոսներդ ալ մեկական գավազան ունիք ձեր ձեռքին»: Եվ մենք ըսինք, թե այդ գավազանը մենք կկոչենք «հովվական գավազան», որ կխորհրդանշե հոգևոր իշխանությունը՝ տրված Քրիստոսի կողմե իր աշակերտներուն, երբ ան ղրկեց զանոնք հովվելու իր հոտը: Եվ ավելցուցի, թե Քրիստոս իր աշակերտներուն հանձնարարեց և ըսավ, որ, «եթե ձեր հարյուր ոչխարներեն մեկը կորսվի, ձգեցեք իննսունինը և այդ մեկ հատին ետևեն գացեք, փնտրեցեք և գտեք»: Կրոնապետը դարձավ և ըսավ ինձի. «Իսկ եթե իննսունինը կորսվի, ի՞նչ պիտի ընեք»:

Վեհափառ Տեր, ես կկարծեմ, թե այսօր Դուք այդ բարի հովիվը եղած եք՝ գլուխը կենալու և իրենց հարազատ հայկական հավատքին ու զգացումներո՛ն մեջ վերականգնելու այն ոչխարները, որոնք հանձնված են Ձեր հովվության և մեր պատմության դժբախտ պարագաներուն ցրված են աշխարհի չորս ծագերուն: Կորսված չեն անոնք, քանի որ, ուր որ գացիք, այսպիսի շքեղ պալատներու և հանդիսություններու մեջ հարգեցին Ձեզ: Եվ սակայն թերևս անոնց հոգիներուն մեջ տկարացած է հավատարմության այն զգացումը, որ ամեն հայ պետք է կապե իր հայրենիքին և սրբություն սրբոց ս. Էջմիածնին: Ձեր ներկայությունը, վստահաբար, ամեն հայու սրտին մեջ կվերականգնե հայրենասիրության և հայ կյանքի զգացումները:

Երբ այսօր Ֆրանսայի Հանրապետության պալատը կմտնեիք և զինվորական բացառիկ պատիվներով կընդունվեիք, ես մտածեցի այն օրերուն, երբ հայոց հայրապետները ափ կառնեին պալատներու դուռը, որ հաճախ չէր բացվեր անոնց առջև, տառապած, գերի ինկած հայ ժողովուրդին համար օգնություն մուրալու:

Այսօր իրականություն է, որ Հայոց Հայրապետը հպարտությամբ կմտնե նախագահական պալատներե և թագավորական ապարանքներե ներս, որովհետև մեր հայրենի հողին վրա մենք ունինք հայկական պետականություն: Եվ վերջապես, երբ երեկ Բարեգործականի սրահը կայցելեիք և կնվիրեիք անոնց ս. Էջմիածնի նկարը, հիշեցի ուրիշ դժբախտ օրեր մեր պատմութենեն, երբ Շահ Աբաս երեք դարեր առաջ բազմահազար հայեր կքշեր դեպի Պարսկաստան և կտեսներ, թե անոնք արմատ չեն նետեր օտար հողի վրա: Եվ երբ իր խորհրդականներեն մեկուն հարցուց, թե ի՞նչ ընե, որ անոնք մնան, խորհրդականը ըսավ. «Ամեն հայու սիրտը կապված է ս. Էջ-

միածնին, և եթե կուզեք, որ այստեղ մնան, պետք է, որ քարեր բերեք ս. Էջմիածնեն և Էջմիածնի շենքի նման գեղեցիկ շենք մը կառուցանեք, թերևս կապեք հայերու հոգին պարսկական հողին»: Սակայն իրականությունը այն է, որ Էջմիածնի քարերու տեղափոխությամբ որևէ օտար հողի չի կապվիր հայու հոգին, որովհետև անիկա կապված է Էջմիածնի այն մյուս կառույցին, որ մեր հայերուն հավատքն է: Մեր հայկական հավատարմություններուն առանցքը որևէ ատեն չի տեղափոխվիր հայրենիքեն դուրս, որովհետև, ինչպես ըսած է այն ատենվան պատմիչ Առաքել Դավրիժեցին՝ հայոց ազգը կապված է ս. Գրիգոր Լուսավորչի Աջին ու ս. Էջմիածնին, և մեր հավատքի ճամբան, Աստուծո հասնելու համար, անպայմանորեն Էջմիածնեն պետք է անցնի: Եվ միայն Էջմիածնի լույսով է, որ մենք հստակ կտեսնենք մեր ազգային կյանքի ճանապարհը:

Վեհափառ Տեր, այս զգացումներով է, որ անգամ մը ևս կհայտնեմ Երուսաղեմի մեր միաբանության հավատարմության և ամբողջական սիրո զգացումը, մաղթելով, որ հովվական Ձեր գավազանը իր շուքին տակ միացած պահե միշտ մեր ազգի բոլոր բեկորները, ուր որ ալ անոնք գտնվին, Ձեր անձին մեջ ամեն մարդ տեսնե միշտ Լուսավորչի արժանավոր այն ժառանգորդը, որ վառ կպահե Էջմիածնի խորհուրդը ամեն հայու գիտակցութեանեն ներս, և վերջապես Ձեզմով լեցվին բոլորն ալ հայրենիքի զգացումով՝ միշտ նայելու համար հայրենիքին այն մեծ հույսով, որ օր մը Դուք կամ Ձեզի նման հայոց հայրապետ մը պիտի առաջնորդե իր զավակները դեպի իր հայրերուն երկիրը՝ այնտեղ օրհնելու համար հայերուն Աստվածը»:

Ողջերթի ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը հանդես եկավ ընդարձակ և բովանդակալից մի ճառով, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 5—11):

Ողջերթի սույն ճաշկերույթն ավարտվեց Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Հունիսի 8-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց առաջնորդարանում ընդունեց ԱՄՆ-ից ժամանած արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի, թեմական ժողովի անդամ տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի, ինչպես նաև թեմական ժողովի ատենապետ տիար Ջոն Նաճարյանի այցելությունները:

Հունիսի 9-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ Ալեքս Մանուկյանի և նրան ընկերակցող Հ. Բ. Ը. Միության վետերան անդամ, փաստաբան Հակոբ Տերտերյանի:

Ավելի ուշ առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը մասնավոր տեսակցություն ունեցավ պրն. Ալեքս Մանուկյանի հետ:

Հունիսի 10, կիրակի:

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունեց «Ֆրանսահայ համալսարանավարտների միության» պատվիրակությանը՝ գլխավորությամբ միության նախագահ Բեռնար Վարժապետյանի:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը նկարիչ Գառզուի, որին ընկերակցում էին նրա հարգարժան տիկինը և որդին: Այս առթիվ Գառզուն Մայր Աթոռին նվիրեց իր գեղանկարներից մեկը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետի՝ Փարիզից մեկնելու առիթով այսօր ս. պատարագ մատուցեց տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, և քարոզեց տ. Շահե արքեպ. Անճեմյանը հետևյալ բնաբանով՝ «Իսկ արդ, որք ընջեցինն ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք» (Ա Կորնթ. ԺԵ 18):

Նույն օրը, միաժամանակ, Շավիլի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագեց տ. Մասիս վարդապետը, և քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Սիրեցէք զմիմեանս» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էին նաև Շավիլի քաղաքագլուխ պրն. Ուլիեն, երեսփոխան Կլոդ Լաբեն, ծերակուտական Անդրե Ֆոսեն և շրջանի եկեղեցական և պետական բարձրաստիճան այլ անձնավորություններ:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ եկեղեցուն առընթեր հայկական միօրյա դպրոցի սրահում: Այստեղ Վեհափառ Հայրապետին ողջունեցին եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ղևոնդ քհն. Սոմունճյանը, համայնքի անունից՝ Գրիգոր Փափազյանը:

Խոսք առավ նաև պրն. քաղաքագլուխը և Շավիլի նահանգապետի ու իր անունից ողջունեց Հայոց Հայրապետին:

Նույն օրը, ժամը 13.30-ին Փարիզի «Գրանդ հոթել» հյուրանոցում Վեհափառ Հայրապետի պատվին պրն. Ալեքս Մանուկյանը կազմակերպեց ընդունելություն: Ընդունելությանը ներկա էին տ. Սերովբե, տ. Թորգոմ, տ. Շահե, տ. Գյուտ սրբազանները, տ. Փառեն ծ. վարդապետը, հայրապետական շքախմբի անդամները, պարոնայք Զոն Նաճարյանը, Հակոբ Տերտերյանը, Շավարշ Սևհոնքյանը և պաշտոնական այլ հյուրեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՓԱՐԻԶԻՆ

Հունիսի 11-ին, երկուշաբթի օրը, ժամը 14-30-ին, Վեհափառ Հայրապետը Փարիզի «Շարլ դը Գոլ» օդանավակայանից մեկնեց Մոսկվա՝ ուղեկցությամբ Իր շքախմբի անդամների:

Վեհափառ Հայրապետին հանդիսավորապես ճանապարհեցին, տ. Սերովբե սրբազանի գլխավորությամբ, Փարիզի հայ հոգևորականաց դասը, կրոնական ընկերակցության վարչության անդամները, Մայր Աթոռի բարերարները, քույր եկեղեցիների ներկայացուցիչները և այլ պաշտոնական անձինք:

Հանուն ֆրանսիական հանրապետության նախագահի և կառավարության, Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի պետ պրն. Ժան Լարշեն, Առնուվիլի քաղաքագլուխը՝ իր դստեր հետ, ինչպես նաև Ֆրանսիայում սովետական դեսպանատան առաջին քարտուղար պրն. Ռուբեն Սահակյանը:

Ժամը 19-ին, խաղաղ ու հանգիստ թռիչքից հետո, Վեհափառ Հայրապետը ժամանեց Մոսկվայի Շերեմետևոյի օդանավակայան: Այստեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքի խորհրդի անունից՝ Վիկտոր Վալոդինը, Մոսկվայի ռուսաց պատրիարքության ներկայացուցիչները, տ. Տիրան և տ. Գարեգին վարդապետները:

Վեհափառ Հայրապետը նստաջնորդվեց Մոսկվայի «Լենինգրադսկայա» հյուրանոց: